

ԵՇՐՈՒԹ Ա.ԶԴԳԱՅՑԻՆԵՐ

Ա.

Եկ իմ սիրուն սիրելագոյն
Զբեցիր բենեզ ծիրանագոյն,
Եկ աղաւնի փետրք զարդուն
Եկ իմ տատրակ քաղցըր խօսուն:
Բամեալ ծաղկանց ազգ ժողովնե
Գունով գեղով համազարդին,
Խուռոն տերևով փթթեալ պըշտին
Բայց ոչ ունին հոս քո վարդոյն:
Գերազանցեալ գոհար վարդին
Կայծ հարկէհան շափիւղոյին,
Բոլոր պատկէր զետ ըզուսին
Զեայ քեզ նախ գեղեցիագոյն:
Մարդարիտ անդին աննըսման
Լուսոյ ճաճանչ բերեղանման,
Դու Ճառագոյի արեգական
Այսօր ցոլացեալ եղէր յամազոյն:
Ոսկիապատ գօղով պանեն
Լանջօք քո արկ շըլաշտեռ,
Այս քո գունով քան վլար կարմիր
Չանդ աղնիւ վայելլագոյն:
Վարսիւք դեղան ծամահայով
Յեսեալ յականց թափ մարդարտով,
Ոսկի գընութէք բազկանցով
Պըճընաւորն յարմարագոյն:
Սիրամարդ իմ ոսկի փետրով
Ել ՚ի հովիսոս առ շոշանով,
Կայթեսոց ՚ի պարը ձեւմերզ
Ահա հընչեաց հորմ մեղմագոյն:
Եկն հարաւ, հընչեաց այգին
Ոսսոս արձակեաց նոտ նըշնին,
Ահա բուրեաց հոս նարդոսին
Մաղկունին ամեն պարծառագոյն:
Սիրով խօսյաց ՚ի պարտիզին
Էանց երկիւղն ձեռունային,
Ժամ է որ գայ տատրակն յայգին
Նըւագելով երգ քաղցըրագոյն:
Ինձ տեսութեան առնել արժան
Սակու երգոյս լինել հաւան,
Ընկալ գովիսս ներրողական
՚ի Սովոխէ նըւաստագոյն:

Բ

Այսօր խմենք քաղցըր և յորդոր
Բարեկամաց ՚ի հետ բոլոր,

Գինիս աղէկ, ճաշակն աղւոր,
Խնոյշ խմենք քաղցըր և յորդոր:
Դուք մի լընուք զգաւաթըն խոր
Եւ կամ դատասրի պահէլ զափոր,
Զի խմել մարդն է ծովի խոր.
Այս, խմենք քաղցըր և յորդոր:
Երեց տանուտէր հարկեոր
Ընդ հարսանիվ կամ կիփաւոր,
Թող թէ կոչեն շատ հարկեոր:
Այս, խմենք քաղցըր և յորդոր:
Ժողով տանեն շատ թագաւոր
Իւր մեծամեծն և իշխանաւոր,
Լիոր խմենք շատ շափաւոր.
Անյշ խմենք քաղցըր և յորդոր:
Խըմն ՚ի լի մեծ փառչով նոր
Շունկս անկանին զինչ մեղաւոր,
Կերպ համբուրեն, տան կամաւոր.
Այսօր խմենք քաղցըր և յորդոր:
Հաց, միու հաւ, տանձ ու խնձոր
Զայնէ գաւաթ, տայ հեռաւոր,
Ղընէ միմեաց մազայ ոսկոր.
Այսօր խմենք քաղցըր և յորդոր:
Ճերմակ մօրուք շատ ալոր
Մանուկ ընտիր և ձիաւոր,
Ցայնժամ ամեն սեր միաւոր.
Անուշ խմենք քաղցըր և յորդոր:
Կա տանուտէր մարդ փառաւոր
Ենչան ՚ի մեռն է ահաւոր,
Ուր ինք իրմէ մարդ գլխաւոր.
Այսօր խմենք քաղցըր և յորդոր:
Զարէն փըրկէ տէրն երկինաւոր
Պահէ զամեն մարդ երկրաւոր,
Զնչեա ՚ի մեջ զմարդ նենդաւոր.
Այսօր խմենք քաղցըր և յորդոր:
Ռամ խուժագուժ կան և խօժոն
Սրոտնելաց նային խոտոր
Վասն որ կան շուն թիւնաւոր.
Այսօր խմենք քաղցըր և յորդոր:
Տէր, առոր բարի սեր հոգեոր
Ռամեալ մարդկան սեր բանաւոր,
Ցնծան սիրով յոյժ զօրաւոր.
Այսօր խմենք քաղցըր և յորդոր:
Իրեւեալ մաշիմ գունի ՚ի կոր
Փառասիրիմ մարմնով զինչ հոր.
Քեզ Արտիրոս, գինով խոչկոր.
Անյշ խմենք քաղցըր և յորդոր:

